

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

(Առողջապահության որակի բարելավման ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ԹՎԱԳՐՎԱԾ 28 փետրվարի, 2025թ. -ով

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

28 փետրվարի 2025թ.-ով թվագրված ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջեւ:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՅՆ, ՈՐ՝

Ա) Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին՝ սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրվող Ծրագրի նպատակներով վարկի տրամադրման համար,

Բ) Ծրագիրն իրականացվելու է Վարկառուի Առողջապահության նախարարության կողմից, եւ այդ նպատակով Վարկառուն սույն փաստաթղթով նախատեսված վարկային միջոցները տրամադրելու է ԱԶԲ-ի եւ Վարկառուի համար փոխշահավետ պայմաններով, եւ

Գ) ԱԶԲ-ն համաձայնել է Վարկառուին վարկ տրամադրել ԱԶԲ-ի սովորական կապիտալի միջոցներից սույն փաստաթղթում սահմանվող պայմաններով,

ԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻՑ՝ սույն համաձայնագրի կողմերը համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկավորման կանոններ, սահմանումներ

Բաժին 1.01. ԱԶԲ-ի 2022 թ. հունվարի 1-ի սովորական գործառնությունների վարկավորման կանոնները (Վարկավորման կանոններ) սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի են նույն ուժով եւ գործողությամբ այնպես, ինչպես դրանք ամբողջությամբ ձեւակերպված կլինեին սույն փաստաթղթում՝ հաշվի առնելով հետեւյալ փոփոխությունները.

ա) Բաժին 2.01 (խգ)-ն հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագիր» եզրույթը նշանակում է ծրագիր, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել, ինչպես նկարագրվում է Վարկային համաձայնագրում, եւ այնքանով, որքանով այդ նկարագրությունը կարող է պարբերաբար փոփոխվել ԱԶԲ-ի եւ Վարկառուի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ.

բ) «Նախագիծ» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագիր» եզրույթով.

գ) Բաժին 2.01(խը)-ն հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագրի իրականացման գրասենյակ» եզրույթը նշանակում է այն մարմինը կամ մարմինները, որոնք պատասխանատու են Վարկային համաձայնագրին համապատասխան Ծրագրի իրականացման համար.

դ) «Նախագծի իրականացման գրասենյակ» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագրի իրականացման գրասենյակ» եզրույթով:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում գործածվելու դեպքում Վարկավորման կանոններով սահմանված մի շարք եզրույթներ ունեն դրանցում սահմանված համապատասխան նշանակությունը, եթե սույն փաստաթղթում չեն փոփոխվել, կամ եթե կիրառվում են այլ համատեքստում: Սույն Վարկային համաձայնագրում գործածվող լրացուցիչ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» նշանակում է Ծրագրերի համար արդյունքահեն վարկավորման շրջանակներում խարդախության, կոռուպցիայի եւ արգելված այլ գործողությունների կանխարգելման կամ մեղմացման համար ԱԶԲ ուղեցույցները, ինչպես սահմանված է Ծրագրի իրականացման փաստաթղթի (ԾԻՓ) Առդիր 1-ում:

բ) «Վարկառուի ծրագիր» նշանակում է առողջապահական համակարգի բարեփոխումները, որոնք սահմանված են Վարկառուի կառավարության ծրագրում (2021-2026թթ.), որը հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի թիվ 1363-Ն որոշմամբ (ներկայումս կատարված փոփոխություններով), Առողջապահության ոլորտի զարգացման ռազմավարությունում (2023-2026թթ.), որը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 9-ի թիվ 174-Լ որոշմամբ, Առողջապահության համապարփակ ապահովագրության հայեցակարգում (2023-2027թթ.), որը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 3-ի թիվ 133-Լ որոշմամբ, Բժշկական օգնության եւ սպասարկման որակի ապահովման ռազմավարությունում (2022-2026թթ.), որը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2022 թ. ապրիլի 20-ի թիվ 1614-Լ հրամանով եւ Առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) գործողությունների ծրագրով, որը հաստատվել է Առողջապահության նախարարի 2022թ. հուլիսի 7-ի թիվ 2910-Լ հրամանով, որոնցից յուրաքանչյուրը պարբերաբար թարմացվում, փոփոխվում եւ լրացվում է Վարկառուի կիրառելի կանոնների եւ ընթացակարգերի համաձայն:

գ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 2-րդ կետով սահմանված հաշիվը:

դ) «ՄԿՑ» նշանակում է մասհանումների հետ կապված յուրաքանչյուր ցուցանիշ, որը սահմանված է ՄԿՑ մատրիցում:

ե) «ՄԿՑ մատրից» նշանակում է Ծրագրի համար ՄԿՑ մատրիցը, ինչպես սահմանված է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 2-րդ

հավելումում, որը Վարկառուն եւ ԱԶԲ-ն ժամանակ առ ժամանակ թարմացնում են:

գ) «ՄԿՑ վերիֆիկացման գործելակարգ» նշանակում է Վարկառուի կողմից ՄԿՑ-ներից յուրաքանչյուրի ապահովումը վերիֆիկացնելու գործելակարգը, ինչպես սահմանված է ԾԻՓ-ում:

է) «Թույլատրելի ծախսեր» նշանակում է այն թույլատրելի ծախսերը, որոնք նշվում են սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 2-րդ կետում:

ը) «ԲԳՈՒՇ» նշանակում է Ծրագրի համար բնապահպանական գնահատման եւ ուսումնասիրության շրջանակը, այդ թվում՝ նաեւ վերջինիս ցանկացած թարմացված տարբերակ, որը պատրաստվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում ԱԶԲ-ի կողմից:

թ) «Բնապահպանական երաշխիքներ» նշանակում է ԵԲՀ-ի (Երաշխիքների քաղաքականության հայտարարություն) V գլխում, 1-ին առդիրում եւ 4-րդ առդիրում (կիրառելի լինելու դեպքում) սահմանված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները:

ժ) «Հարկաբյուջետային տարի» նշանակում է Վարկառուի հարկաբյուջետային տարին, որը յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն է:

ժա) «Բարձր արժեքով պայմանագրեր» նշանակում է՝ i) մեկ պայմանագրի համար \$50,000,000-ին համարժեք կամ այդ գումարը գերազանցող՝ աշխատանքների գնման, շահագործման համար լիովին պատրաստ (turnkey՝ «բանալու տակ») եւ մատակարարման ու տեղադրման պայմանագրերը, ii) մեկ պայմանագրի համար \$30,000,000-ին համարժեք կամ այդ գումարը գերազանցող՝ ապրանքների գնման պայմանագրերը, iii) մեկ պայմանագրի համար \$20,000,000-ին համարժեք կամ այդ գումարը գերազանցող՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ ոչ խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագրերը, եւ/կամ iv) մեկ պայմանագրի համար \$15,000,000-ին համարժեք կամ այդ գումարը գերազանցող՝ խորհրդատվական ծառայությունների գնման

պայմանագրերը:

ժբ) «Բնիկ ժողովուրդներին առնչվող երաշխիքներ» նշանակում է ԵԲՀ-ի V գլխում, 3-րդ առդիրում եւ 4-րդ առդիրում (կիրառելի լինելու դեպքում) սահմանված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները:

ժգ) «Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներ» նշանակում է ԵԲՀ-ի V գլխում, 2-րդ առդիրում եւ 4-րդ առդիրում (կիրառելի լինելու դեպքում) սահմանված նպատակները եւ քաղաքականության սկզբունքները:

ժդ) «ՀՕՏԾ» նշանակում է Ծրագրի համար հողի օտարման եւ տարաբնակեցման շրջանակը, այդ թվում նաեւ՝ վերջինիս ցանկացած թարմացված տարբերակ, որը պատրաստվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում ԱԶԲ-ի կողմից:

ժե) «Վարկի մասհանումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկի մասհանումների ձեռնարկը (2022թ., պարբերաբար կատարվող փոփոխություններով):

ժզ) «ԱՆ» նշանակում է Վարկառուի Առողջապահության նախարարությունը կամ ցանկացած իրավահաջորդ:

ժէ) «ԾԻՓ» նշանակում է Ծրագրի համար Ծրագրի իրականացման փաստաթուղթը՝ թվագրված 2024թ. սեպտեմբերի 12-ի ամսաթվով, որը պարբերաբար թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից:

ժը) «Ծրագիր» նշանակում է ԱԶԲ-ի կողմից մասամբ ֆինանսավորվող՝ BISP ծրագրի մի մասը, որը նկարագրված է սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածում, եւ որին հղում է կատարվում սույն Վարկային համաձայնագրի (Ա) նախաբանում:

ժթ) «Ծրագրի գործողությունների պլան» նշանակում է Ծրագրի համար գործողությունների պլանը, որը ներառված է ԾԻՓ-ում՝ թվագրված 2024թ.

սեպտեմբերի 12-ի ամսաթվով, որը պարբերաբար թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից:

ի) «Ծրագրի գործողություններ» նշանակում է Ծրագրի գործողությունների պլանում սահմանված գործողությունները:

իա) «Ծրագրի ավարտի օր» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածի 3-րդ կետում սահմանված օրը կամ այնպիսի օր, որը կարող է համաձայնեցվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից:

իբ) Վարկավորման կանոնների նպատակներով եւ դրանցով սահմանված իմաստով «Ծրագրի իրականացման գրասենյակ» նշանակում է ԱՆ-ն կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրա ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի իրականացման համար:

իգ) «ԾԵՀԳ» նշանակում է Ծրագրի համար ծրագրի երաշխիքների համակարգի գնահատումը, այդ թվում նաեւ՝ դրա ցանկացած թարմացված տարբերակ, որը պատրաստվում եւ ներկայացվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում ԱԶԲ-ի կողմից:

իդ) «ԵՔՀ» նշանակում է ԱԶԲ-ի երաշխիքների քաղաքականության հայտարարությունը (2009թ.), եւ

իե) «Աղյուսակ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 1-ին հավելումում սահմանված վարկային միջոցների հատկացման եւ առհանման վերաբերալ աղյուսակը:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել քառասուհինգ միլիոն երեք հարյուր տաս հազար եվրո (€45,310,000), եւ այդ գումարը կարող է պարբերաբար փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթների համաձայն:

բ) Վարկի մայր գումարի մարման ժամկետը 11 տարի է, իսկ արտոնյալ ժամանակահատվածը՝ սույն բաժնի ստորել նշված «գ» ենթակետի համաձայն:

գ) Սույն բաժնի «բ» ենթակետում գործածված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին վճարման օրվան նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

Բաժին 2.02. Վարկառուն պարբերաբար ԱԶԲ-ին վճարում է տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված եւ չվճարված վարկի մայր գումարի դիմաց՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն դրույքաչափով, որը հավասար է հետեւյալ գումարին.

ա) ԵՎՐԻԲՈՐ (Euribor),

բ) 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով սահմանված կարգով, հանած 0.10%-ը՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով սահմանված կարգով, եւ

գ) ըստ մարման ժամկետների ապահովագրավճար՝ 0.10%-ի չափով, ինչպես նախատեսված է Վարկավորման կանոնների 3.03 բաժնով:

Բաժին 2.03. Վարկառուն վճարում է տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար: Այդ վճարը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած պարբերաբար առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային

համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից:

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարները եւ այլ վճարներ կատարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին եւ դեկտեմբերի 15-ին :

Բաժին 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը մարում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթների համաձայն:

Բաժին 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարմանը նպաստելու նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել վարկի պայմաններում հետեւյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

i) առհանված եւ չվճարված կամ չառհանված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի արժույթի փոխարինումը հաստատված արժույթով.

ii) առհանված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող բազային տոկոսադրույքի փոփոխումը լողացող տոկոսադրույքից ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, եւ
iii) առհանված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող լողացող տոկոսադրույքի սահմանափակումը՝ նշված լողացող տոկոսադրույքի համար տոկոսադրույքի սահմանային չափը կամ տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն չափերը (տոկոսային միջանցք) սահմանելու միջոցով:

բ) Վերոնշյալ բաժնի «ա» ենթակետի համաձայն հայցված եւ ԱԶԲ-ի կողմից ընդունելի ցանկացած փոխարկում համարվում է «Փոխարկում»՝ Վարկավորման կանոնների 2.01 բաժնի «ե» կետով սահմանված կարգով եւ ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների V հոդվածի դրույթների եւ Փոխարկման ուղեցույցի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն Վարկային միջոցներն օգտագործում է Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Վարկային համաձայնագրի դրույթների համաձայն:

Բաժին 3.02. Վարկային միջոցները հատկացվում են առհանձնում են Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթների համաձայն, ընդ որում, այդ հավելվածը կարող է պարբերաբար փոփոխվել՝ Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

Բաժին 3.03. Վարկավորման կանոնների 9.02 բաժնի նպատակներով Վարկի Փակման օրը 2028թ.-ի դեկտեմբերի 31-ն է կամ ցանկացած այլ օր, որը պարբերաբար պետք է համաձայնեցվի Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պարտավորությունները

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Բաժին 4.02. ա) Վարկառուն Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով՝
i) պատրաստում է Ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվողականության ստանդարտների համաձայն, ii) ապահովում է այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի անցկացումն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը եւ բանիմացությունն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ ԱԶԲ-ի կողմից ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն, iii) ապահովում է յուրաքանչյուր նման աուդիտի շրջանակներում աուդիտորների կողմից այնպիսի հաշվետվության

պատրաստումը, որը ներառում է աուդիտորների կարծիքը (կարծիքները)՝ ֆինանսական հաշվետվությունների եւ վարկային միջոցների օգտագործման մասին, եւ ղեկավարությանն ուղղված նամակը (որով ներկայացվում են Ծրագրի ներքին հսկողության թերությունները, որոնք բացահայտվել են աուդիտի ընթացքում, այդպիսիք լինելու դեպքում), եւ(iv) համապատասխան յուրաքանչյուր հարկաբյուջետային տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո ԱԶԲ-ին է ներկայացնում աուդիտի ենթարկված այդ ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի հաշվետվության եւ ղեկավարությանն ուղղված նամակի օրինակները, բոլորն անգլերենով, ինչպես նաեւ այդ փաստաթղթերի եւ դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած այնպիսի տեղեկատվություն, որն ԱԶԲ-ն ողջամտորեն պարբերաբար կպահանջի:

բ) ԱԶԲ-ն հրապարակում է Ծրագրի՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների կարծիքը՝ դրանց ընդունելի լինելը ԱԶԲ-ի կողմից հաստատելուց հետո 14 օրվա ընթացքում՝ դրանք տեղադրելով ԱԶԲ-ի կայքէջում:

գ) Վարկառուն Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով ԱԶԲ-ի խնդրանքով վերջինիս հնարավորություն է ընձեռում վերոնշյալ «ա» կետի (iii) ենթակետի համաձայն նշանակված աուդիտորների հետ քննարկել Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները եւ Վարկառուի՝ Ծրագրին առնչություն ունեցող ֆինանսական հարցերը եւ այդ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի լիազորում է մասնակցել ԱԶԲ-ի խնդրանքով անցկացվող այդ քննարկումներին եւ նրանցից պահանջում է դա: Նախատեսվում է, որ նման քննարկումներն անցկացվեն միայն Վարկառուի լիազորած պատասխանատուի ներկայությամբ, եթե Վարկառուի կողմից այլ բան համաձայնեցված չէ:

Բաժին 4.03. Վարկավորման կանոնների 7.01 եւ 7.04 բաժիններում նշվող տեղեկատվության եւ հաշվետվությունների շրջանակներում Վարկառուն ԱԶԲ է ներկայացնում կամ ապահովում, որ ԱԶԲ ներկայացվեն՝ ա) Ծրագրի իրականացման վերաբերյալ, այդ թվում նաեւ՝ ՄԿՑ-ների իրականացման, Ծրագրի

գործողությունների իրականացման եւ թույլատրելի ծախսերի վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները, եւ բ) ԱԶԲ-ի կողմից ողջամիտ կերպով պահանջվելու դեպքում՝ վերոհիշյալ «ա» ենթակետում նշված հաշվետվությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաեւ Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ տեղեկատվություն:

Բաժին 4.04. Վարկառուն ԱԶԲ-ի ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռում ստուգել Ծրագիրը եւ դրան առնչվող ցանկացած գրառում եւ փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Բաժին 5.01. Վարկավորման կանոնների 10.04 բաժնի նպատակներով սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օր է սահմանվում սույն Վարկային համաձայնագիրը կնքելու օրվանից հետո 90-րդ օրը:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 12.02 բաժնի նպատակներով Վարկառուի Ֆինանսների նախարարությունը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 12.01 բաժնի նպատակներով նշվում են հետեւյալ հասցեները.

Վարկառուի կողմից՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան 1

Երեւան, 0010, Հայաստան

Ֆաքս՝

(374 11) 800-132

ԱԶԲ-ի կողմից՝

Ասիական զարգացման բանկ

ԱԶԲ պողոտա 6

քաղ. Մանդալույոնգ

1550 Մետրո Մանիլա

Ֆիլիպիններ

Ֆաքս՝

(632) 8636-2444

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի Կողմերը, հանդես գալով պատշաճ կերպով լիազորված իրենց ներկայացուցիչների միջոցով, իրենց անունից ստորագրեցին սույն Վարկային համաձայնագիրը վերոնշյալ ամսաթվին եւ տարում եւ դա փոխանցեցին ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

Դոնալդ Լամբերտ, Հայաստանի ռեզիդենտ առաքելության երկրի տնօրենի կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուի ծրագրի իրականացմանը՝ Բժշկական օգնության եւ սպասարկման որակի բարելավման տեսքով:

2. Ծրագիրը կազմված կլինի հետեւյալից.

ա) **Կլիմայական, գենդերային հարցերի առումով պատասխանատու եւ ներառական առողջապահական հաստատություններ՝ առողջապահական որակյալ ծառայությունների մատուցման համար՝** i) առողջապահական հաստատությունների նախագծման, կառուցման, վերանորոգման եւ սարքավորումներով հագեցման միջոցով, որոնք համապատասխանում են կլիմայի փոփոխության մեղմացման եւ հարմարվողականության, ներառական նախագծման եւ գենդերազգայուն հարցերին արձագանքման չափանիշներին, ii) որակյալ բնութագրերով առողջապահական հաստատությունների լիցենզավորում, եւ iii) ընտրված հեռավոր վայրերում հեռաբժշկության պիլոտավորում:

բ) **Բժշկական օգնության եւ սպասարկման որակի համար կարողությունների եւ կազմակերպման ամրապնդում՝ հետեւյալի միջոցով.** i) ինստիտուցիոնալ կառուցվածքի, առաջնորդության, որակյալ բժշկական օգնության եւ սպասարկման միջոցառումների համար ֆինանսավորում եւ կարողությունների ապահովում, ինչպես օրինակ՝ որակի կառավարման կենտրոնական բաժնի գործարկում, ֆինանսական ռեսուրսների տրամադրում՝ Առողջության համապարփակ ապահովագրության միջոցով բժշկական օգնության եւ սպասարկման բարելավման համար, ii) բժշկական օգնության որակի, էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում, եւ(iii) որակավորված բուժաշխատողների հասանելիության բարձրացում.

եւ

գ) **Բուժսպասարկման որակի չափման եւ հաշվետվողականության ինստիտուցիոնալացում՝** բարելավելով թվային մոնիթորինգ իրականացնելու

բուժհաստատությունների կարողությունները, ամրապնդելով եւ ինստիտուցիոնալացնելով բուժսպասարկման որակի մոնիթորինգը եւ հաշվետվողականությունը եւ հրապարակելով բուժսպասարկման որակի ցուցանիշերի եւ տվյալների տարեկան վերլուծությունները:

3. Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի մինչեւ 2028թ-ի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մարման ժամանակացույց

1. Ստորեւ բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի մայր գումարի վճարման ամսաթվերը եւ մայր գումարի վճարման յուրաքանչյուր օր վճարման ենթակա՝ վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսները (Վճարման մասնաբաժին): Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված են, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը ԱԶԲ-ի կողմից սահմանվում է՝ բազմապատկելով՝ ա) մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ առհանված եւ չմարված վարկի ընդհանուր մայր գումարը, բ) մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրվա համար Վճարման մասնաբաժինը, իսկ մարման ենթակա այդ գումարն ըստ անհրաժեշտության ճշգրտվում է սույն հավելվածի 4-րդ կետում նշված այն գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Վճարման ամսաթիվը

Վճարման մասնաբաժինը

(տոկոսային արտահայտությամբ)

15 դեկտեմբեր 2031	4.545455
15 հունիս 2032	4.545455
15 դեկտեմբեր 2032	4.545455
15 հունիս 2033	4.545455
15 դեկտեմբեր 2033	4.545455

15 հունիս 2034	4.545455
15 դեկտեմբեր 2034	4.545455
15 հունիս 2035	4.545455
15 դեկտեմբեր 2035	4.545455
15 հունիս 2036	4.545455
15 դեկտեմբեր 2036	4.545455
15 հունիս 2037	4.545455
15 դեկտեմբեր 2037	4.545455
15 հունիս 2038	4.545455
15 դեկտեմբեր 2038	4.545455
15 հունիս 2039	4.545455
15 դեկտեմբեր 2039	4.545455
15 հունիս 2040	4.545455
15 դեկտեմբեր 2040	4.545455
15 հունիս 2041	4.545455
15 դեկտեմբեր 2041	4.545455
15 հունիս 2042	4.545445
Ընդամուս	100.000000
_____	_____ %
_____	_____ %
_____	_____ %

2. Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը սահմանվում է հետևյալ կերպ.

ա) Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված եւ չվճարված գումարը՝ սույն հավելվածի 1-ին պարբերության համաձայն,

բ) վարկի մայր գումարի առաջին վճարման օրվանից հետո ցանկացած առհանված գումար վերադարձվում է այդ առհանմանը հաջորդող՝ վարկի մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարների չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն հավելվածի 1-ին պարբերության աղյուսակում

նշված՝ վարկի մայր գումարի տվյալ վճարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը այդ օրը կամ դրանից հետո ընկնող՝ վարկի մայր գումարի վճարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է, ընդ որում, մարման ենթակա այդ գումարները, ըստ անհրաժեշտության, ճշգրտվում են սույն հավելվածի 4-րդ պարբերությունում նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրը միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով՝ վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվան նախորդող երկու (2) օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները համարվում են առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվա դրությամբ առհանված եւ չվճարված, եւ ենթակա են մարման՝ առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվանից սկսած մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը:

4. Անկախ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններում նախատեսված դրույթներից՝ վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա մի մասը հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նշված հաստատված արժույթի այդ կերպ փոխարկված գումարի չափը, որը ենթակա է մարման Փոխարկման ժամանակահատվածի ընթացքում վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվա դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված փոխարկումից անմիջապես առաջ գործող արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ ա) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ նշված Հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ ii) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպիսի որոշում կայացնի՝ Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

5. Եթե վարկի մայր գումարի առհանված եւ չվճարված մասը պարբերաբար արտահայտվում է Վարկի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն հավելվածի դրույթները կիրառվում են վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր գումարի համար մարման առանձին ժամանակացույց կազմվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների հատկացումը եւ առհանումը

Ընդհանուր

1. Բացառությամբ սույն հավելվածում սահմանված կամ ԱԶԲ-ի կողմից այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ այլ դեպքերում վարկային միջոցները հատկացվում են Վարկի մասհանումների ձեռնարկի համաձայն:

Դեպոզիտային հաշիվ

2. Նախքան վարկային հաշվից առհանումներ կատարելու համար առաջին հայտը ԱԶԲ-ին ներկայացնելը Վարկառուն բացում է հաշիվ Ծրագրի իրականացման գրասենյակի անունով՝ որպես պետական գանձապետարանում Ծրագրի դեպոզիտային հաշիվ (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Վարկառուի գանձապետական միասնական հաշվի միջոցով (որի մանրամասների մասին Վարկառուն ԱԶԲ-ին պատշաճ կերպով տեղեկացնում է առհանման հայտով): Կասկածներից զերծ մնալու համար Վարկային հաշվից բոլոր առհանումները մուտքագրվում են Դեպոզիտային հաշվին: Դեպոզիտային հաշիվը կառավարվում եւ փակվում է ԱԶԲ-ի համար բավարար պայմանների համաձայն:

3. Դեպոզիտային հաշվի հետ կապված Վարկառուն վարում է առանձին հաշիվներ եւ գրանցամատյաններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական

հաշվառման սկզբունքների համաձայն:

Վարկային հաշվից առհանման հիմքերը

4. ա) Աղյուսակում սահմանված են Վարկի գումարները, որոնք հատկացվում են ՄԿՑ-ի ապահովման դիմաց առհանելու համար՝ Վարկառուի կողմից համապատասխան ՄԿՑ թիրախները ապահովելուց հետո, ինչպես սահմանվում է ՄԿՑ մատրիցում: Աղյուսակում սահմանվող տարիներն ինդիկատիվ են: Դրանք չեն սահմանափակում ՄԿՑ թիրախները ապահովելու դիմաց առհանումները՝ անկախ այն բանից, թե դրանք նշված տարվանից առաջ, թե հետո են ապահովվել՝ պայմանով, որ այդ ՄԿՑ թիրախներն ապահովվել են Ծրագրի ավարտի օրը կամ դրանից առաջ:

բ) Վարկառուին ծանուցելու միջոցով ԱԶԲ-ն կարող է միեւնույն ՄԿՑ-ի շրջանակներում կամ մի ՄԿՑ-ից ցանկացած այլ ՄԿՑ-ի վերաբաշխել Աղյուսակում սահմանված վարկի գումարները:

5. Նախքան վարկային հաշվից ՄԿՑ-ի ապահովման դիմաց առհանումներ կատարելու համար առհանման հայտ ներկայացնելը Վարկառուն ՄԿՑ վերիֆիկացման գործելակարգի համաձայն ԱԶԲ-ին է ներկայացնում բավարար փաստեր առ այն, որ ա) այդ ՄԿՑ-ն ամբողջությամբ ապահովվել է, կամ բ) այն ՄԿՑ-ի դեպքում, որի համար մասնակի հատկացումներ թույլատրվում են (ինչպես սահմանված է ՄԿՑ մատրիցում), այդ ՄԿՑ-ն ապահովվել է այնքանով, որքանով պահանջվում է ՄԿՑ վերիֆիկացման գործելակարգի շրջանակներում միջոցների մասնակի հատկացման համար: ՄԿՑ-ի ամբողջական կամ մասնակի ապահովումն ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց հետո Վարկառուն կարող է ԱԶԲ-ին ներկայացնել այդ ՄԿՑ-ի դիմաց վարկի համապատասխան գումարի առհանման հայտ:

Կանխավճարային ֆինանսավորումը եւ նախնական արդյունքների ապահովման դիմաց ֆինանսավորումը

6. ա) նախքան ՄԿՑ-ների ապահովումը Վարկառուն Վարկային հաշվից կարող է առհանել կանխավճարային ֆինանսավորման գումար՝ ծրագրի ֆինանսավորման պահանջները բավարարելու եւ այդ ՄԿՑ-ների ապահովմանն աջակցելու նպատակով՝ պայմանով, որ չմարված կանխավճարային ֆինանսավորման գումարը երբեւէ չպետք է գերազանցի վարկի գումարի 25%-ը: ԱԶԲ-ն չմարված կանխավճարային ֆինանսավորման գումարը կամ դրա ցանկացած մաս նվազեցնում է այն վարկային միջոցներից, որոնք պետք է հատկացվեն ՄԿՑ-ների ապահովման դիմաց:

բ) Վարկառուն կարող է վարկային հաշվից գումարներ առհանել նախքան Ուժի մեջ մտնելու օրն ապահովված ՄԿՑ-ների դիմաց, սակայն սույն Վարկային համաձայնագրի կնքման օրվանից 12 ամսից ոչ շուտ՝ պայմանով, որ նախնական արդյունքների դիմաց այդ առհանումների համախառն գումարը չի գերազանցում Վարկի գումարի 20%-ը:

գ) Կանխավճարային չմարված համախառն գումարը եւ վերոնշյալ (ա) եւ (բ) ենթակետերում նշված նախնական արդյունքների ֆինանսավորման համար առհանվող գումարը երբեւէ չպետք է գերազանցի Վարկի գումարի 30%-ը:

Փոխհաշվարկ

7. Եթե մինչեւ Ծրագրի ավարտի օրը որեւէ ՄԿՑ չի ապահովվել, Վարկառուն Ծրագրի ավարտի օրվանից հետո 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին փոխհատուցում է այդ ՄԿՑ-ի համար չմարված կանխավճարային ֆինանսավորման ցանկացած գումար կամ դրա մի մասը:

8. Եթե Թույլատրելի ծախսերի ընդհանուր գումարն ավելի փոքր է, քան Վարկառուի կողմից առհանված վարկի գումարը, Վարկառուն Ծրագրի ավարտի օրվանից հետո 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին փոխհատուցում է դրանց տարբերության չափով գումար:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԵՎ ԱՌՅԱՆՈՒՄ (Եվրո (€), միլիոն)							
Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ)	Ընդհա- նուր ԱԶԲ հատկա- ցում	Ֆինանսա- վորում նախնական արդյունքների ապահովման դիմաց	2024թ	2025թ	2026թ	2027թ	2028թ
ՄԿՑ 1. Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկումը կբարելավվի առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) մակարդակում: Սիրտանոթային բարձր ռիսկ կամ շաքարային դիաբետ ունեցող տղամարդկանց և կանանց տոկոսի, ում ցածր խտության լիպոպրոտեինի (ՑԽԼ/LDL) մակարդակը կստուգվի տարեկան առնվազն մեկ անգամ, կավելանա:	2.27	0.0	0.0	0.45	0.91	0.45	0.45
ՄԿՑ 2. Սրտամկանի սուր ինֆարկտի դեպքում ներհիվանդանոցային մահացությունը կնվազի: ST հատվածի էլեացիայով սրտամկանի ինֆարկտով (STEMI) հոսպիտալացված, համապատասխան ռեպերֆուզիոն թերապիա անցած տղամարդկանց և կանանց տոկոսը կավելանա ելակետայինի համեմատ:	1.81	0.0	0.0	0.0	0.91	0.45	0.45
ՄԿՑ 3. Կվերականգնվեն կամ կկառուցվեն և կվերագինվեն առողջապահական հաստատություններ: Բուժօգնություններ (ԲՅ) կվերանորոգվեն կամ կկառուցվեն և սարքավորումներով կհագեցվեն կլինիկական փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ներառական նախագծման և գեներային համապատասխան չափանիշների համաձայն:	16.76	0.0	4.98	5.44	2.72	1.81	1.81
ՄԿՑ 4. Հեռաբժշկության միջոցով առողջապահական ծառայությունների հասանելիությունն կընդլայնվի: Հեռաբժշկության	3.17	0.0	0.45	0.91	0.91	0.45	0.45

պիլոտ կիրականացվի մի քանի հեռավոր տեղամասերում և պիլոտը կգնահատվի՝ կապ հաստատելով կանանց, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ:							
ՄԿՑ 5							
ՄԿՑ 5(ա). Կձևավորվեն ինստիտուցիոնալ կառուցվածքը, ղեկավարությունը, ֆինանսավորումը և խնամքի որակի գործունեության կարողությունները: Կգործի Որակի կառավարման կենտրոնական ստորաբաժանումը (QMCU), որտեղ աշխատակիցների առնվազն կեսը կանայք կլինեն:	2.27	0.0	1.36	0.91	0.0	0.0	0.0
ՄԿՑ 5(բ). Բուժապասարկման որակը բարելավելու նպատակով Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) միջոցով ֆինանսական միջոցներ կտրամադրվեն:	6.34	0.0	0.0	6.34	0.0	0.0	0.0
ՄԿՑ 5(գ). Կբարձրանա այն բուժհաստատությունների տոկոսը, որոնք ունեն ներդրված որակի բարելավման ծրագրեր և ակտիվորեն ներգրավվում են որակի բարելավմանն ուղղված սոցիալական իմաստով ներառական, գենդերային և կլիմայական պահանջներին համապատասխանող, որակի բարելավման արշավներին:	4.98	0.91	0.91	0.91	0.91	0.91	0.45
ՄԿՑ 6. Կապահովվի որակյալ բուժաշխատողների առկայությունը: Լիցենզավորման նոր պահանջների համաձայն հավաստագրված բժիշկների և նոր ընդունվածների տոկոսը կբարձրանա:	5.44	2.72	0.0	0.91	0.91	0.45	0.45
ՄԿՑ 7. Մոնիտորինգ և գեկուցում խնամքի ուժեղացված և ինստիտուցիոնալացված որակի համար: Կբարձրանա այն բուժհաստատությունների տոկոսը, որոնք Հայաստանի Էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգի (ԱՐՄԵԴ) միջոցով տարանջատված տվյալներ են ներկայացվում ≥ 15 բժշկական օգնության որակի ցուցանիշների համար:	2.27	0.0	0.0	0.91	0.45	0.45	0.45
Այլ արդյունքներ							
ԸՆԴՀԱՆՈՒՐ	45.31	3.63	7.7	16.78	7.72	4.97	4.51

ՄԿՑ ՄԱՏՐԻՑ

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնական արդյունքներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
ՄԿՑ 1. Մինչև 2028թ. սիրտանոթային բարձր ռիսկ կամ շաքարային դիաբետ ունեցող տղամարդկանց և կանանց տոկոսը, ում ցածր խտության լիպոպրոտեինի (ՑԽԼ/LDL) մակարդակը ստուգվում է տարեկան առնվազն մեկ անգամ, ավելացել է՝ հասնելով առնվազն 90%-ի:	Հասանելի ելակետային տվյալներ դեռևս չկան, քանի որ հաշվետվողականության համակարգը դեռևս չկա	2025թ.	-	-	Հասանելի ելակետային տվյալներ Ծառայությունների փաթեթն ընդլայնել է՝ ներառելու համար ՑԽԼ մոնիթորինգը՝ ռիսկի խմբում գտնվող բնակչության համար	≥70%	≥80%	≥90%
ՄԿՑ 2. Մինչև 2028թ. ST հատվածի էլեագիայով սրտամկանի ինֆարկտով	Հասանելի ելակետային տվյալներ դեռևս չկան, քանի որ	2025թ.	-	-	Հասանելի ելակետային տվյալներ	≥10% բազայինի համեմատ	≥15% բազայինի համեմատ	≥20% բազայինի համեմատ

Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնա կան արդյունքներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
(STEMI) հոսպիտալացված, համապատասխան ռեպերֆուզիոն թերապիա անցած տղամարդկանց և կանանց տոկոսի ավելացում առնվազն 20%-ով ելակետայինի համեմատ:	հաշվետվող դականություն ան համակարգը դեռևս չկա							
ՄԿՑ 3. Մինչև 2028թ. առնվազն 24 բուժհաստատություններ (ԲՀ) կվերանորոգվեն կամ կկառուցվեն և սարքավորումներով կհագեցվեն կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ներառական նախագծման և գենդերային համապատասխան չափանիշների համաձայն:	0	2023թ.	-	Բուժհաստատությունների նախագծման նորմերն ինտեգրում են կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացումը և դրանց հարմարվողականությունը, ներառական նախագծո	≥5 բուժհաստատությունների հիմնանորոգում/կառուցում կամ սարքավորումներով հագեցում՝ սահմանված չափորոշիչների համաձայն	≥10 բուժհաստատությունների հիմնանորոգում/կառուցում կամ սարքավորումներով հագեցում՝ սահմանված չափորոշիչների համաձայն	≥20 բուժհաստատությունների հիմնանորոգում/կառուցում կամ սարքավորումներով հագեցում՝ սահմանված չափորոշիչների համաձայն	≥24 բուժհաստատությունների հիմնանորոգում/կառուցում կամ սարքավորումներով հագեցում՝ սահմանված չափորոշիչների համաձայն

Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնական արդյունքներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
				Լմը և գենդերային պահանջներին համապատասխանությունը				
ՄԿՑ 4. Մինչև 2028թ. հեռաբաժնիության պիլոտի իրականացում 10 հեռավոր տեղամասերում և պիլոտի գնահատում՝ կապ հաստատելով կանանց, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ:	0	2023թ.	-	Հեռաբաժնիության պիլոտի մոտեցման և ներդրման ներառում ԱԱԴ գործողությունների ծրագրում և ծրագրային ապահովման մշակման ավարտում	Հեռաբաժնիության և պիլոտ ≥ 2 հեռավոր տեղամասերում՝ կանանց, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու միջոցառումներով և պիլոտի գնահատում	Հեռաբաժնիության պիլոտ ≥ 2 լրացուցիչ հեռավոր տեղամասերում՝ կանանց, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու միջոցառումներով և պիլոտի գնահատում	Հեռաբաժնիության պիլոտ ≥ 3 լրացուցիչ հեռավոր տեղամասերում՝ կանանց, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու միջոցառումներով և պիլոտի գնահատում՝ հետագա տարածման համար խորհուրդառաջարկներով	Հեռաբաժնիության և պիլոտ ≥ 3 լրացուցիչ հեռավոր տեղամասերում՝ կանանց, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու միջոցառումներով և պիլոտի գնահատում՝ հետագա տարածման համար խորհուրդառաջարկներով

Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնա կան արդյուն քներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
ՄԿՑ 5(ա). Մինչև 2025թ. Որակի կառավարման կենտրոնական ստորաբաժանման (QMCU) գործում է, որտեղ աշխատակիցների առնվազն կեսը կանայք են:	0	2023թ.	-	Որակի կառավար ման կենտրոն ական ստորաբա ժանումը (QMCU) ստեղծվել է՝ կառավար ության կողմից համապա տասխան հաստատ ումով և բյուջե հատկացն ելով	Որակի կառավարման կենտրոնական ստորաբաժանու մը (QMCU) գործում է, ներառյալ որակի բարելավման (QI) բարձր որակավորում ունեցող անձնակազմ, առաջադրվել են որակի բարելավման մասնագետներ:	-	-	
ՄԿՑ 5(բ). Մինչև 2025թ. բուժսպասարկման որակը բարելավելու նպատակով Առողջության համապարփակ ապահովագրության (ՍՀԻ) միջոցով Ֆինանսական միջոցների տրամադրում	0	2023թ.	-	-	Ֆինանսական միջոցներ՝ ԱՀԱ-ի միջոցով տրամադրվող բուժսպասարկմ ան որակը բարելավելու նպատակով:	-	-	

Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնական արդյունքներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
ՄԿՑ 5(գ). Մինչև 2028թ. բուժհաստատությունների առնվազն 75%-ն ունեն ներդրված որակի բարելավման ծրագրեր և առնվազն 40%-ն ակտիվորեն ներգրավվում են որակի բարելավմանն ուղղված սոցիալապես ներառական, գենդերային և կլիմայական պահանջներին համապատասխանող արշավներին	0	2023թ.	ԱՆ կողմից հաստատված որակի բարելավման գործիքներ ի, մեթոդներ ի և արշավներ ի ներդրման պլան	≥3 ՈԲ գործիքներ ի իրականացում՝ առնվազն 2 ՈԲ մեթոդների ցուցադրում պիլոտային 3 հաստատություններում և գնահատում	Բուժհաստատությունների ≥15% ունեն որակի բարելավման պլաններ/ծրագրեր որակի բարելավման գործիքների և մեթոդների իրականացման վերաբերյալ	Բուժհաստատությունների ≥35% ունեն որակի բարելավման պլաններ/ծրագրեր որակի բարելավման գործիքների և մեթոդների իրականացման վերաբերյալ Բուժհաստատությունների ≥25%-ը մասնակցել են ≥1 որակի բարելավման արշավին	Բուժհաստատությունների ≥50% ունեն որակի բարելավման պլաններ/ծրագրեր որակի բարելավման գործիքների և մեթոդների իրականացման վերաբերյալ Բուժհաստատությունների ≥30%-ը մասնակցել են ≥1 որակի բարելավման արշավին	Բուժհաստատությունների ≥75% ունեն որակի բարելավման պլաններ/ծրագրեր որակի բարելավման գործիքների և մեթոդների իրականացման վերաբերյալ Բուժհաստատությունների ≥40%-ը մասնակցել են ≥1 որակի բարելավման արշավին
ՄԿՑ 6. Մինչև 2028թ. լիցենզավորված բժիշկների առնվազն 60%-ը և և Նոր ընդունվածների 100%-ը լիցենզավորված կլինեն լիցենզավորման Նոր	0	2023թ.	Հաստատվել է առողջապահության ոլորտի մասնագետների լիցենզավորման	-	Բժիշկների և օրդինատորների լիցենզավորման համար մեխանիզմների և պահանջների մշակում և հաստատում	Նոր ընդունվող կլինիկական օրդինատորների ≥60% -ը լիցենզավորում է	Հավաստագրված բոլոր բժիշկների և բոլոր Նոր կլինիկական օրդինատորների ≥60% -ը լիցենզավորված է:	

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ)	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նախնական արդյունքներ	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
պահանջներին համապատասխան			մասին օրենքը					
ՄԿՑ 7. Մինչև 2028թ. բուժհաստատությունների առնվազն 80%-ը, որոնք Հայաստանի Էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգի (ԱՐՄԵԴ) միջոցով տարանջատված տվյալներ են ներկայացվում ≥ 15 բուժսպասարկման որակի (QOC) ցուցանիշների համար, որոնք տեղեկատվական վահանակների վրա վիզուալիզացված են:	0	2023թ.		-	Բուժսպասարկման և հաստատված ցուցանիշների համար հաշվետվողական նույնիսկ համակարգի ներդրում տարանջատված տվյալներով: Բուժսպասարկման և որակի վերաբերյալ տեղեկատվական վահանակների մշակում և ներդրում ԱՆ-ի կողմից բուժհաստատության և ազգային մակարդակներում :	Բոլոր ԱԱՊ օղակի բուժհաստատությունների և հիվանդանոցների առնվազն 80%-ը ներկայացնում են տարանջատված տվյալներ ≥ 10 բուժսպասարկման ցուցանիշների համար, ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որոնք վիզուալիզացվում են տեղեկատվական վահանակների վրա	Բոլոր ԱԱՊ օղակի բուժհաստատությունների և հիվանդանոցների առնվազն 80%-ը ներկայացնում են տարանջատված տվյալներ ≥ 12 բուժսպասարկման ցուցանիշների համար, ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որոնք վիզուալիզացվում են տեղեկատվական վահանակների վրա	Բոլոր ԱԱՊ օղակի բուժհաստատությունների և հիվանդանոցների առնվազն 80%-ը ներկայացնում են տարանջատված տվյալներ ≥ 15 բուժսպասարկման և ցուցանիշների համար, ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որոնք վիզուալիզացվում են տեղեկատվական վահանակների վրա

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ծրագրի իրականացումը

Իրականացման հետ կապված միջոցառումները

1. Վարկառուն եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովում են, որ Ծրագիրն իրականացվի ԾԻՓ-ում սահմանված մանրամասն միջոցառումների համաձայն: ԾԻՓ-ի ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից տվյալ փոփոխությունը հաստատելուց հետո: ԾԻՓ-ի եւ սույն Վարկային համաձայնագրի միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Վարկային համաձայնագրի դրույթները:

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում թույլատրելի ծախսերի համախառն գումարը հավասար լինի կամ գերազանցի այն վարկային միջոցները, որոնք Վարկառուն առհանել է Ծրագրի համար: Այդ թույլատրելի ծախսերը Վարկառուի ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի մաս են կազմում, սակայն դրանք չեն ներառում ծախսերը՝ ա) ԱԶԲ անդամ չհանդիսացող երկրներից աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների գնման համար, բ) ԱԶԲ-ի կողմից իրավունքից զրկված կամ արգելված անձանցից կամ ընկերություններից աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների գնման համար, գ) բարձր արժեքով պայմանագրեր ներառող գնումների համար, դ) ցանկացած գործունեության համար, որը ԵԲՀ-ի համաձայն բնապահպանական ազդեցության տեսանկյունից դասակարգվում է որպես Ա կատեգորիայի, ե) ցանկացած գործունեության համար, որը կարող է ունենալ այնպիսի էական բացասական հետեւանքներ, որոնք շրջակա միջավայրի եւ/կամ ազդակիր անձանց համար զգայուն, տարատեսակ կամ աննախադեպ են, եւ զ) ցանկացած գործունեության համար, որը ԵԲՀ-ի 5-րդ առդիրի շրջանակներում արգելված ներդրումային գործունեություն է:

ՄԿՑ համապատասխանության եւ Ծրագրի երկխոսություն

3. Վարկառուն ապահովում է, որ Վարկառուի Ծրագրի ողջ ընթացքում ապահովվի համապատասխանությունը Ծրագրի շրջանակներում ապահովված բոլոր ՄԿՑ-ներին:

4. Վարկառուն և Ծրագրի իրականացման գործակալությունը ԱԶԲ-ին տեղեկացնում է բազմակողմ կամ երկկողմ աջակցություն տրամադրող այլ գործակալությունների հետ քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Վարկառուի Ծրագրի իրականացման եւ Ծրագրի վրա, եւ ԱԶԲ-ին հնարավորություն է ընձեռում դիտողություններ ներկայացնել արդյունքում ձեւավորված ցանկացած առաջարկի վերաբերյալ: Վարկառուն պատշաճ կերպով հաշվի է առնում ԱԶԲ-ի տեսակետները՝ նախքան այդպիսի որեւէ առաջարկի ամփոփումը եւ իրականացումը:

Գործընկերային աջակցությունը

5. Վարկառուն Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով ապահովում է, որ լինեն բոլոր քաղաքականությունները, գործընթացները եւ ընթացակարգերը՝

i) Ծրագրի իրականացման գրասենյակին յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար բյուջետային միջոցների համարժեք եւ ժամանակին հատկացում տրամադրելու համար՝ ռեսուրսներին Ծրագրով ներկայացվող պահանջներին համապատասխան Ծրագիրը ժամանակին եւ արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով, եւ ii) կառուցված կամ վերանորոգված բուժհաստատությունների, ինչպես նաեւ Ծրագրի շրջանակներում ձեռք բերված սարքավորումների շահագործման եւ սպասարկման համար բյուջետային միջոցների համարժեք եւ ժամանակին հատկացում ապահովելու համար՝ այդ բժշկական հաստատությունների եւ սարքավորումների շահագործման ծախսերի համար:

Տեխնիկական պահանջները

6. Վարկառուն կապահովի, կամ կնպաստի, որպեսզի Ծրագրի իրականացման գործակալությանը ապահովի ծրագրային միջոցառումները տեխնիկական պահանջների իմաստով, իրականացվեն ժամանակին և արդյունավետ կերպով՝ Ծրագրի գործողությունների ծրագրով նախանշվող ժամկետների համաձայն և դրանց իրականացման կարգավիճակի մասին զեկուցվի Ծրագրի իրականացման կիսամյակային հաշվետվության շրջանակներում:

Ֆինանսական կառավարումը

7. Վարկառուն կապահովի, կամ կնպաստի, որպեսզի Ծրագրի իրականացման գործակալությանը ապահովի ծրագրային բոլոր միջոցառումները ֆինանսական կառավարման ոլորտում իրականացվեն ժամանակին և արդյունավետ կերպով:

Գնումները

8. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պայմանագիր շնորհվի Ծրագրի գնումների համակարգի հիման վրա՝ պատշաճ կերպով հաշվի առնելով մրցակցության, տնտեսման, արդյունավետության, թափանցիկության եւ արդարության ու հավասար հնարավորությունների սկզբունքները:

9. Վարկառուն ապահովում է, որ գնումների ոլորտում Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ կերպով:

Բնապահպանական եւ սոցիալական երաշխիքները

10. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների մասով Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն

Ժամանակին եւ արդյունավետ կերպով:

11. ա) Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ Ծրագրի շրջանակներում որեւէ շինարարական կամ հիմնանորոգման աշխատանք չունենա այնպիսի էական բացասական բնապահպանական ազդեցություններ, որոնք ԵԲՀ-ի համաձայն՝ կարող են դասակարգվել որպես Ա կատեգորիայի: Նախքան Ծրագրի շրջանակներում կառուցման կամ հիմնանորոգման որեւէ աշխատանք սկսելը Վարկառուն իրականացնում է կամ ապահովում է, որ Ծրագրի իրականացման գրասենյակն իրականացնի սքրինինգ՝ ապահովելու համար, որ ցանկացած աշխատանք, որը ԵԲՀ-ի նկատառումներից ելնելով՝ բնապահպանական ազդեցության տեսանկյունից կարող է դասակարգվել որպես Ա կատեգորիայի, բացառվի Ծրագրից:

բ) Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ Ծրագրի շրջանակներում բոլոր գործողությունների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, շահագործումը եւ ապամոնիտաժումը համապատասխանեն i) շրջակա միջավայրին, առողջությանը եւ անվտանգությանն առնչվող՝ Վարկառուի կիրառելի բոլոր օրենքներին, կարգավորումներին եւ ուղեցույցներին, ii) բնապահպանական երաշխիքներին եւ iii) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, այդ թվում՝ մոնիթորինգային պահանջներին, որոնք սահմանված են Ծրագրի գործողությունների պլանում, ԾԵՀԳ-ում եւ ԲԳՈՒՇ-ում:

12. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ Ծրագիրը չներառի տարաբնակեցման հետ կապված որեւէ ռիսկ կամ ազդեցություն՝ ԵԲՀ-ի իմաստով: Եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված՝ Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը համապատասխանի ա) տարաբնակեցմանն առնչվող՝ Վարկառուի կիրառելի բոլոր

օրենքներին եւ կարգավորումներին, բ) Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներին եւ գ) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, այդ թվում՝ մոնիթորինգային պահանջներին, որոնք սահմանված են Ծրագրի գործողությունների պլանում, ԾԵՀԳ-ում եւ ՀՕՏԾ-ում:

13. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ Ծրագիրը չներառի բնիկ ժողովուրդների հետ կապված որեւէ ռիսկ կամ ազդեցություն՝ ԵԲՀ-ի իմաստով: Եթե չնախատեսված հանգամանքներով պայմանավորված՝ Ծրագիրը ներառում է այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը համապատասխանի ա) բնիկ ժողովուրդներին առնչվող՝ Վարկառուի կիրառելի բոլոր օրենքներին եւ կարգավորումներին, բ) Բնիկ ժողովուրդներին առնչվող երաշխիքներին եւ գ) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, այդ թվում՝ մոնիթորինգային պահանջներին, որոնք սահմանված են Ծրագրի գործողությունների պլանում եւ ԾԵՀԳ-ում:

Գենդերային եւ սոցիալական հավասարությունը

14. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ գենդերային եւ սոցիալական հավասարության մասով Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ կերպով:

Մոնիթորինգը եւ գնահատումը

15. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ մոնիթորինգի եւ գնահատման մասով Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ կերպով:

Կառավարման եւ հակակոռուպցիոն հարցերը

16. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ապահովել, որ Ծրագիրը համապատասխանի Հակակոռուպցիոն ուղեցույցին, եւ ժամանակին ձեռնարկվեն բոլոր պատշաճ միջոցառումները, որոնք ուղղված են Ծրագրին առնչվող՝ խարդախ, կոռուպցիոն կամ որեւէ այլ արգելված գործելակերպի մասին պնդումները կանխելուն, հայտնաբերելուն եւ դրանց արձագանքելուն՝ Հակակոռուպցիոն ուղեցույցի համաձայն:

17. Վարկառուն ապահովում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին ա) անհապաղ տեղեկացնել ԱԶԲ-ին Ծրագրին առնչվող՝ խարդախ, կոռուպցիոն կամ որեւէ այլ արգելված գործելակերպի վերաբերյալ ցանկացած պնդման մասին եւ բ) լիարժեք կերպով համագործակցել այդ պնդումների հետ կապված՝ ԱԶԲ-ի կողմից իրականացվող ցանկացած քննության դեպքում եւ տրամադրել անհրաժեշտ ողջ աջակցությունը, այդ թվում՝ ապահովել համապատասխան բոլոր փաստաթղթերի հասանելիությունը՝ այդ քննությունը բավարար կերպով ավարտին հասցնելու նպատակով:

18. Ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 90 օրվա ընթացքում, Վարկառուն թարմացնում է կամ հանձնարարում է Ծրագրի իրականացման գրասենյակին թարմացնել իր հանրային կայքէջը՝ ա) Ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն տրամադրելու, բ) Ծրագրին առնչվող՝ աուդիտի ենթարկված տարեկան

Ֆինանսական հաշվետվությունները հասանելի դառնալուն պես դրանք հրապարակելու եւ գ) Ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան այլ տեղեկատվություն տարածելու համար: